ՔԱՂՎԱԾՔՆԵՐ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

1956 Թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՆԻՍՏԻՑ

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում լսեց Խորհրդի ատենապետ գերաշնորհ Տ. Սահակ եպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանի հաղորդումը այն մասին, որ հունիսի 23-ին Կիլիկիո Կաթողիկոսության Միաբանական ընդհանուր ժողովը, նախագահությամբ գերաշնորհ Տ. Փառեն եպիսկոպոս Մելքոնյանի, ձայների մեծամասնությամբ պաշտոնանկ է արել գերաշնորհ Տ. Խորեն եպիսկոպոս Բարոյանին և Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսական տեղապահ է ընտրել Ամենապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոս Աջապահյանին, նրան վստահելով Աթոռի ղեկավարության հոգևոր և վարչական ամբողջ իշխանությունը։

Այնուհետև Գերագույն Հոգևոր Խորհուրդը խորունկ վշտով լսեց Անթիլիասի վերջին իրադարձությունների մասին, որ Կիլիկյան Աթոռի հետ կապ չունեցող անձինք, քաջալերված գերաշնորհ Տ. Զարեհ եպիսկոպոսի թողտվությունից, Վեհարանի ներսում ֆիզիկական խոշտանգումների և ծեծի են ենթարկել Աթոռի լավագույն միաբաններից հոգեշնորհ Տ. Գնել և Տ. Շահե վարդապետներին և Տ. Գևորգ աբեղային, որ Անթիլիասի Կաթողիկոսարանը ոստիկանական հսկողության տակ է առնված և հարցը հասել է պետական արդարադատության առաջ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը ըստ էության քննելով Անթիլիասի վերջին իրադարձությունները, եկավ հետևյալ եզրակացության։

1) Գերաշնորհ Զ. Զարեհ եպիսկոպոսը ոչ Կաթողիկոս է և ոչ Տեղապահ և զուրկ է հոգևոր և վարչական իշխանությունից, որովհետև Կաթողիկոսի հոգևոր և վարչական իշխանությունը նվիրագործվում է կանոնական ձեռնադրությամբ և Սրբալույս Մեռոնի օծմամբ։

2) Եվ քանի որ հարցը Անթիլիասում այնքան է բարդացել, որի իբր հետևանք ոստիկանությունը միջամտել է և խնդիրը արդեն իսկ հասել է պետական արդարադատության առաջ, և

3) Անթիլիասի միաբանական ընդհանուր ժողովը հուլիսի 23-ին իր օրինական մեծամասնությամբ Տեղապահ է ընտրել բարձրապատիվ Տ. Խադ արքեպիսկոպոսին, որոշեց խնդրել Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետից մասնավոր հեռագիր հղել Լիբանանի բարեխնամ կառավարության Նախագահ Նորին Վսեմություն պ. Քամիլ Շամունին, խնդրելով նրա աջակցությունը, որպեսզի հարգվեն Հայ Եկեղեցու կանոններն ու սուրբ ավանդությունները, Անթիլիասում վերահաստատվի խաղաղությունը և հարգվի

Աթոռի միաբանության մեծամասնության օրինավոր կամքը և բարձրաշնորհ Տ. Խաչ արքեպիսկոպոսը կարենա կատարել իր պարտականությունները որպես Կաթողիկոսական տեղապահ։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսին Կաթողիկոսական տեղապահ ընտրելու Կիլիկյան Աթոռի միաբանության մեծամասնության որոշումը։

Գերագույն Հոգևոր Խորհրդի այս նիստին որոշվեց հոկտեմբերի 7-ը նկատել Նորին Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության տարեդարձ և առաջիկա հոկտեմբերի 7-ին, գահակալության առաջին տարեդարձի հանդիսավոր տոնակատարություններ Ս. Էջմիածին հրավիրել Թյուրքիո հայոց Պատրիարք ամենապատիվ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Խաչատրյանին, Երուսաղեմի հայոց Պատրիարքական տեղապահ ամենապատիվ Տ. Եղիշե արքեպիսկոպոս Տերտերյանին, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամ, Հարավային Ամերիկայի հայոց Հայրապետական պատվիրակ գերաշնորհ Տ. Սիոն արքեպիսկոպոս Մանուկյանին և Երուսաղեմի Աթոռի միաբան գերապատիվ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանին։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստում լսեց Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի հաղորդումը նաև Հայաստանից դուրս եղբայրական հանրապետությունների հայաշատ վայրերում հայկական եկեղեցիների վերաբացման մասին։ Առաջիկա ամիսների ընթացքում Վրաստանի, Ադրբեջանի, Հյուսիսային Կովկասի, Միջին Ասիայի և Ուկրաինայի հայաշատ քաղաքներում կբացվեն մի շարք հայկական նոր եկեղեցիներ և ուխտավայրեր։ Գերագույն Հոգևոր Խորհուրդը գոհունակությամբ արձանագրեց եկեղեցիների վերաբացման գործում Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի եկեղեցանվեր նախաձեռնությունն ու միջոցառումները։

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, Գերագույն Հոգևոր Խորհուրդը ձեռնհատորեն գրաղվում է ոչ միայն մեր պատմական հոյակապ հուշարձանների՝ վանքերի, եկեղեցիների նորոգության շնորհակալ գործով, այլ նաև գործող եկեղեցիների նորոգության անմիջական աշխատանքներով։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը իր սույն նիստի մեջ գրաղվեց Նոր Բայազետի եկեղեցու վերանորոգման, Երևանի Ս. Հովհաննես եկեղեցու բակի պարապի կառուցման և շրջապատի անցկացման, Կիրովաբադի եկեղեցու բակի բարեկարգման, Լենինականի Ս. Աստվածածին եկեղեցու կտուրի նորոգման վերաբերյալ ծախսերի նախահաշիվներով և որոշեց այդ նորոգչական և բարեկարգման աշխատանքների համար հատկացնել մոտավորապես 70.000 ռուբլի։

Գերագույն Հոգևոր Խորհուրդը, նկատի ունենալով Ադրբեջանի և Թուրքեստանի թեմական առաջնորդ գերաշնորհ Տ. Եղնիկ եպիսկոպոս Աղնավուրյանի առողջական վիճակն ու առաջացած տարիքը, որոշեց Սրբազանին ազատել թեմական առաջնորդի պարտականությունից և կանչել նրան Մայր Աթոռ, նշանակելով կենսաթոշակ, և թեմական գործերը մասնավոր արձանագրությամբ հանձնել առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Տիրայր արեղա Մարտիկյանին։